

ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020

ԱՄՍԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ





<b>1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ</b> .....	<b>4</b>
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում .....	5
1.2. Ջրաչափերի տեղադրում և փոխարինում .....	7
1.3. Ջրահեռացման համակարգ .....	7
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում .....	8
1.5. Էներգահամակարգ .....	9
1.6. Մեքենա-մեխանիզմներ .....	9
<b>2. Առևտրային տնօրինություններ</b> .....	<b>11</b>
2.1. Բաժանորդների տվյալներ .....	12
2.2. Հասույթ .....	12
2.3. Գանձում .....	13
2.4. Դեֆիտորական պարտքեր /Իրավաբանական վարչություն/ .....	14
2.5. Ջրաչափեր .....	15
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում .....	16
<b>3. Տեխնիկական տնօրինություն</b> .....	<b>17</b>
3.1. Ջրամատակարարման շարունակականություն .....	18
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում .....	19
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ .....	21
3.4. Ջրատար համակարգի բարելավում .....	22
3.5. Գոտիավորման աշխատանքներ .....	23
<b>4. Լրատվական ծառայություն</b> .....	<b>26</b>
<b>5. Որակի, առողջության և անվտանգության ծառայություն</b> .....	<b>28</b>
5.1. Փաստաթղթերի մշակում .....	29
5.2. COVID-19 համավարակի կանխարգելման միջոցառումներ .....	29
5.3. Դասընթացներ/սեմինարներ .....	29
5.4. Այլ աշխատանքներ .....	30
<b>6. Համակարգչային ցանց և սերվերային համակարգ</b> .....	<b>31</b>
6.1. Համակարգչային ցանց .....	34
6.2. Բնտերակտիվ համակարգ .....	35

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ  
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



## 1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարաորոնողական և ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես

### Քաղաք Երևան

#### ● Նոր Նորք վարչական շրջան

«Հարավ» ՇՏ «Հյուսիս» տեղամասի աշխատակիցների կողմից Նոր Նորք 1-ին զանգված, Նանսենի փողոց 16/1 հասցեում  $d=65$ մմ  $L=50$ գծ/մ երկարությամբ քայքայված պողպատե ջրագիծը փոխարինվել է  $D=63$ մմ պոլիէթիլենային ջրագծով: Կատարված աշխատանքների արդյունքում բարելավվել է բնակիչ-բաժանորդների ջրամատակարարումը, ինչպիսիք է մոտ  $Q=3$ լ/վրկ ջրաքանակ:



#### ● Մարզ Արարատ

«Արտաշատ» տեղամասի աշխատակիցների կողմից Սիսավան համայնքի Մաշտոցի փողոցով անցնող  $d=100$ մմ  $L=80$ գծ/մ երկարությամբ անորակ, շարքից դուրս եկած պոլիէթիլենային ջրագիծը փոխարինվել է նոր  $d=100$ մմ պոլիէթիլենային խողովակներով, ինչպես նաև  $d=250$ մմ  $L=9$ գծ/մ երկարությամբ ազբեստե խողովակը փոխարինվել է  $d=40$ մմ  $L=9$ գծ/մ նոր պոլիէթիլենային խողովակով: Իրականացված աշխատանքների արդյունքում բաժանորդները ապահովված են որակյալ և տևական ջրամատակարարումով:

● Գյուղ Ղուկասավան 18 փողոցում գտնվող  $d=50$ մմ  $L=530$ գծ/մ երկարությամբ վթարային վիճակում գտնվող պողպատե ջրագիծը փոխարինվել է նոր  $d=75$ մմ  $L=230$ գծ/մ և  $d=63$ մմ  $L=300$ գծ/մ պոլիէթիլենային խողովակներով: Թվով 31 բնակիչ-բաժանորդների տարածքից դուրս տեղադրվել են ջրաչափական դիտահորեր և փոխարինվել են ջրաչափական սարքերը:



## Մարզ Սյունիք, Վայոց Ձոր

● «Եղեգնաձոր» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Գետափ համայնքի Չախափ թաղամասի թվով 40 բնակիչ-բաժանորդների ջրամատակարարումը իրականացվում էր D=25-50մմ քայքայված ջրագծերով, ինչի հետևանքով հաճախակի էին վթարները և առկա էր ջրակորուստ:

Տեղամասի աշխատակիցների կողմից Չախափ թաղամասում կառուցվել է նոր D=90մմ L= 400զճ/մ երկարությամբ պոլիէթիլենային ջրագիծ, իրականացվել են թվով 40 բնակիչ-բաժանորդների անհատական ջրամիացումները: Ջրատարից միացման հատվածում կառուցվել է դիտահոր, որտեղ տեղադրվել են D=80մմ և D=32մմ գնդիկային փականներ:



Իրականացված աշխատանքների արդյունքում ջրամատակարարումը բարելավվել է և քանակապես, և որակապես, բացառվել են ապօրինի միացումները և ջրակորուստները:



## Մարզ Արմավիր

### Քաղաք Արմավիր

Բաղրամյան փողոց 25/1, 27/1, 29/1 բազմաբնակարան շենքերի բակային տարածքում գտնվող d=100մմ L=145զճ/մ երկարությամբ պողպատե խողովակը «Արմավիր» տեղամասի աշխատակիցների կողմից փոխարինվել է d=90մմ պոլիէթիլենային խողովակով: Փոխարինվել են նաև նշված շենքերի թվով 11 մուտքագծերը d=50մմ պոլիէթիլենային խողովակով:



Հոկտեմբեր ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:



Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	2,497
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	23,780
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	23,119
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	11,520
Ջրաչափական հանգույններ ուսուճասիրություն, սխեմաների կազմում	հատ	0
Շահագործումից հանված ջրագիծ	մ	8816.5
Կառուցված ջրագիծ	մ	4914.1
Կառուցված կոյուղագիծ	մ	259.5
Վերացված գաղտնի վթարներ	հատ	34
Փոխարինված փական	հատ	19
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	483
Մաքրված դիտահոր	հատ	398
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	40.3
<b>Վերացված վթարներ</b>	<b>Չափման միավոր</b>	<b>Քանակ</b>
Ջրամատակարարման ցանցում	հատ	1325
Ջրահեռացման ցանցում	հատ	2729
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	0

Հոկտեմբեր ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	794	956	487

## 1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է հոկտեմբեր ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									Ընդամենը
	15	20	25	32	40	50	65	80	100	
Տեղադրված	135	9	2	1	1	1	0	0	0	149
Փոխարինված	267	16	4	6	2	2	0	0	0	297
Տեղափոխված	1	120	0	0	0	0	0	0	0	121
Տեխ. ակտ	45	28	1	1	0	1	0	0	0	76
Ընդամենը	448	173	7	8	3	4	0	0	0	643

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 643 ջրաչափ: Կատարված աշխատանքների 69,67 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

## 1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հոկտեմբեր ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիճ նկարագիր

h/h	Տեղամաս	Կոյուղագծերի լվացում / Մ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում / տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում / գծ/մ
1	Արաբկիր	1640	286	33
2	Մաշտոց	2350	319	27.5
3	Շահումյան	2025	259	2
4	Զեյթուն	720	268	0
5	Շիրակ	260	447	0
6	Արթիկ	90	94	0
7	Ապարան	0	30	0
8	Ալավերդի	870	11	0
9	Աշոցք	0	10	3
10	Բերդ	30	4	0
11	Իջևան	515	19	4
12	Լոռի	3700	285	9
13	Նոյեմբերյան	0	20	33
14	Սպիտակ	200	19	0
15	Ստեփանավան	225	12	0
16	Թալին	0	11	35
17	Տաշիր	280	10	0
18	Էջմիածին	0	163	0
19	Չարենցավան	1265	93	0
20	Աբովյան	3080	105	0
21	Հրազդան	1510	131	0
22	Աշտարակ	2445	17	0
23	Կենտրոն	690	472	24
24	Հյուսիս	0	280	71
25	Հարավ	0	404	8
26	Արմավիր	0	132	0
27	Արտաշատ	0	99	0
28	Արարատ	1284	82	0
29	Մասիս	0	52	0
30	Գավառ	615	26	0
31	Սևան	0	89	0
32	Մարտունի	0	22	0
33	Վարդենիս	0	12	0
34	Ճամբարակ	0	5	0
35	Դիլիջան	180	41	10
36	Վայք	0	14	0
37	Եղեգնաձոր	150	14	00
38	Զերմուկ	0	19	00
39	Սիսիան	140	62	0
40	Գորիս	0	39	0
41	Կապան	520	59	0
42	Մեղրի	0	11	0
	Ընդամենը	24784	4547	259.5

#### 1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Գավառի կեղտաջրերի պոմպակայանում պոմպերը աշխատում էին սակայն ջուր չէին մղում: Հակադարձ փականները ապամոնտաժելուց հետո պարզ դարձավ, որ վերջիններս ամբողջովին խցանվել են: Արդյունքում հակադարձ փականները մաքրվեցին և տեղադրվեցին: Այժմ պոմպերն աշխատում են բնականոն ընթացքով:

- Գավառի կեղտաջրերի մաքրման կայանում օդամղիչներից մեկը չէր աշխատում: Ապամոնտաժումից հետո պարզ դարձավ, որ ռոտորի ածխե թիակները մաշվել են, իսկ օդի ֆիլտրը խցանվել է: Արդյունքում վերջիններս փոխարինվեցին և այժմ օդամուղը աշխատում է բնականոն ընթացքով: Նաև գննվեցին և կարգաբերվեցին մանր ճաղավանդակի քերիչ սանրերը:

- Վարդենիսի կեղտաջրերի պոմպակայանի պոմպը չէր աշխատում: Ապամոնտաժելուց հետո պարզ դարձավ, որ առանցքակալը շարքից դուրս է եկել: Արդյունքում փոխարինվեց առանցքակալը և այժմ պոմպը

աշխատում է բնականոն ընթացքով:

● Սևանի N5 կեղտաջրերի պոմպակայանի պոմպը դադարեց ջուր մղել: Պոմպը դուրս բերելուց հետո պարզ դարձավ, որ պոմպի բանվորական անիվը խցանված էր: Վերջինս մաքրվեց, տեղադրվեց և այժմ պոմպն աշխատում է բնականոն ընթացքով:

● Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	66,652	16,2
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	79,460	16,2
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	167,499	7
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	125,232	10,8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	112,846	9,9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	16,014	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	11,585	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	20,800	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	10,020	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	4,020	0	0

### 1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

Աշխատանքների նկարագիրը	Քանակ
Պոմպի աշխատանքի գնում և կարգավորում	116
Էլեկտրական սարքերի գնում և կարգավորում	9
Այցեր	6
Պոմպի տեղադրում	1

### 1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Հոկտեմբեր ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար: «Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար հոկտեմբեր ամսվա ընթացքում նորոգվել են թվով 6 մեքենաների շարժիչները՝ մասնակի և ընդհանուր, փոխարինվել են

հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները: Թվով 5 մեքենաների արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 11 մեքենամեխանիզմի վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, աստաճանիփներ, առանցքակալներ, կիսատնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Թվով 19 անվադողեր նորոգվել են, փոխարինվել և հավասարակշռվել են:

Թվով 8 մեքենայի մարտկոցը փոխարինվել է նորերով:

Փոխարինվել են թվով 31 մեքենամեխանիզմների շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, արգելակման հեղուկ, քսայուղեր:

Նորոգվել է թվով 3 մեքենաների փոխանցման տուփերը, փոխարինվել են աստաճանիփները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Թվով 9 մեքենաների վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շողկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 8 մեքենաների և էքսկավատորների համար նորոգվել է բարձր ճնշման ռետինե խողովակներ, մխոցներ: Վերանորոգվել են թվով 4 մեքենաների հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամուսի լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ:

Եռակցման աշխատանքներ է իրականացվել թվով 2 մեքենամեխանիզմների վրա:

Թվով 3 մեքենաների վրա իրականացվել են գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուկիներ:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 4 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Թվով 4 մեքենաների մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Թվով 2 մեքենաների վառելիքի համակարգերը նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուներ:

Մնուցման համակարգի նորոգում է իրականացվել թվով 9 մեքենաների վրա, փոխարինվել են ժիգլորներ, ներդիրներ, ասեղներ, բարձր ճնշման շտուցերներ, լիցքավորման հետադարձ փականներ:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում միջնակարգ մեքենամեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



## 2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.11.2020թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 518,982 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2020թ. հոկտեմբեր ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	651,521	497,863	76,4
	Իրավաբանական անձ	28,800	21,119	73,3

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	722,601	593,488	82,1
	Իրավաբանական անձ	34,204	23,863	69,8

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն): Արդյունքում Մարզերի տարածաշրջանի տեղամասերում 2020թ. հոկտեմբեր ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվը, (այցելությունների թիվը), չնայած Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակի, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճել է 37,183 բաժանորդով (կամ մոտ 6,4%):

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել է տվյալների բազա է մուտքագրվել թվով 398 նոր բաժանորդ:

## 2.2. ՀԱՍՈՒՅԹ

Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) զուգահեռ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով:


Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Հոկտեմբեր ամսվա ընթացքում ստուգաչափվել է 2782 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Սարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 10.2020
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	1106	1224	222	2552
	Իրավաբանական անձ	88	121	21	230
	Ընդամենը	1194	1345	243	2782



Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ հոկտեմբեր ամսին փոխարինված 2782 ջրաչափերի մոտ 57%-ը (կամ 1588 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 139,268 մ<sup>3</sup> հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2020թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Հոկտեմբեր ամսին գանձումը կազմել է 1,909.411 մլն դրամ (88,1 %):

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում մինչև մարտ ամիսը, կիրառվում էին բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում,

ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Սակայն, հաշվի առնելով աշխարհում՝ այդ թվում Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը, ինչպես նաև ռազմական դրությունը, ընկերությունը հոկտեմբեր ամսին զերծ է մնացել հիշեցումների և ծանուցումների մինչ այժմ կրառվող մեթոդներից (բացառությամբ՝ SMS-հաղորդագրությունները):

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում էին պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, վերը նշված հանգամանքներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

## 2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Հոկտեմբեր ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 64 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 9,9 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը, 2020թ		Բավարարված		Մերժված		2017-2020թ.թ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
10310	1189686302	6569	664707721	142	19805134	3341	585139433	3711	318579324


Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 63,71 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 1,38 %-ը՝ մերժված:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.11.2020թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում սեպտեմբեր ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	7,448	2,104
Բնակիչ-բաժանորդներ	5,578	1,514
Իրավաբանական անձեր	1,870	590

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

Շուրջ 222.1 մլն ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:



## 2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.11.2020թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	687,321	591,672	86.08	33,072	23,855	72.13
	Առանց ջրաչափի	35,280	1,816	5.15	1,132	8	0.71

Տվյալների բազայում 01.11.2020թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Առևտրային	859,279	377,646	43.95	37,098	9,762	26.31

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 3287 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 185 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճզգրիտ հաշվառմանը:

### ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2315	1885	81.3
գ.Պոռչյան	1552	1025	65.8
ք.Հրազդան, միկրոշրջան թաղ.	5855	1809	30.8

«Լոռի» տեղամասում ընկերության վարչական և տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Չնայած երկրում տիրող համաճարագային իրավիճակին, ջրաչափերի փոխարինման որոշակի աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 7,534, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 5,629, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 979, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1,365, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 838, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 1157 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 2855 ջրաչափական սարք:

## 2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը՝ ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում: Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում էր Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից: Հայտնաբերված և արձանագրված խախտումների քանակի նվազումը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ պայմանավորված է նաև երկրում տիրող, վերը նշված իրավիճակների հետ:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (դրամ)
Առևտրային	128	99,257	16,906,029

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




### 3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված է Երևան քաղաքի հեկտեմբեր ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը՝ 98.6%, ինչը 0.3%-ով ավել է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Ջրամատակարարման շարունակականություն




Սարգերում այդ ցուցանիշը կազմել է 83.9%, որը 0.2%-ով պակաս է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ:




Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի խմբի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են 40 ՃԿՊ-ներ:

Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը.




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2020թ. հոկտեմբեր ամսին, 2019թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել է 149 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսը նվազել է 296 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում.



### 3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 5201 կՎտ.ժ. (1,11%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Երևան քաղաքի բակային պոմպեր ԱՌԱՆՑ ԽԱՐԲԵՐԴԻ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ\*




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության փրոցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է 227 հասցե: Թվով 4 հասցեում հայտնաբերվել է հավելագրում, որը ճշտգրտվել է ՀԷՑ ՓԲԸ-ի կողմից:

● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ. էներգիայի ծախսը ավելացել է 580,99 կՎտ.ժ կամ 2.8 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:



### Էջվածին




### Կատարված աշխատանքներ

Թվով 290 բակային պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում թվով 119 հասցեներում վերացվել են հայտնաբերված թերությունները:

### Ինվերտորների տեղադրու

29 պնմատիկ համակարգեր փոխարինվել են ինվերտորային համակարգով, էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 3515,34 կՎտ/ժամ (13%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:


### Տեղադրված ինվերտորների սպառած էլեկտրաէներգիա



Հաշվետու ժամանակահատվածում 10 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները հայտնաբերվել և վերացվել:

● Հոկտեմբեր ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 294,885 կՎտ.ժամ կամ 21,26% (անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ):


### Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա






● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է 59,507 կՎտ.ժ/ամիս կամ 2,78 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 327,221 կՎտ.ժ կամ 7,20 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

«Վեոյիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա



### 3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

● Ստորև աղյուսակում ներկայացնում են հոկտեմբեր ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.


Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Շահագործումից հանված ջրագիծ	մետր	525
Կառուցված ջրագիծ	մետր	829
Շահագործումից հանված կոյուղագիծ	մետր	63
Կառուցված կոյուղագիծ	մետր	135
Իջևան քաղաքի ջրագծերի թվայնացում	անգամ	1
Երևանի համայնքներում ջրագծերի թարմացում	համայնք	2
Երևանի շենքերի տեղադիրքի և փողոցների թվայնացման աշխատանքներ	տոկոս	60
Ջրագծերի վթարների թվայնացում Մմարթ մոնիթորինգի օտնությամբ	հատ	1
Arc Reader փաթեթի պատրաստում տեղամասերի համար	հատ	2
Տեխնիկական պայմանների թվայնացում	հատ	27
Կոյուղաքծերի թվայնացում Կենտրոնի և Հյուսիսի տեղամասերում	մետր	229644,714
«Ինտերակատիվ» համակարգում 2292 բաժանորդների տվյալների թվայնացում	բաժնորդ	2292
Ներքին ջրային ցանցի տվյալների թվայնացում Արմավիրում և Ալավերդիում	հատ	2
Ակտիվների գնահատման գործընթացի իրականացում պոմպակայաններում	հատ	2
Վանաձոր տեղամասի կողմից տրամադրված տեղեկատվության վերլուծություն օգտվելով ArcGis տվյալների բազայից	հատ	1
Մոդելավորման համար անհրաժեշտ ինֆորմացիայի բազայի ստեղծում և միննույն ժամանակ ArcGis-ում առկա տվյալների վերստուգում, ուղղում	հատ	1

### 3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք հաշվետու ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը:

#### «Արզնի» սանիտարական գոտի

Ուսումնասիրվել է «Արզնի» սանիտարական գոտու՝ «Աղվանի հորի» մոտ գտնվող թիվ 2, թիվ 3 կապտածների անբավարար վիճակը:



#### «Արզնի 1»

Վերացվել է «Արզնի 1» ջրատարի վրա արդեն տևական ժամանակ գտնվող վթարը, որի արդյունքում տնտեսվել է 6լ/վ ջուր:



#### Կաթնաղբյուրի ջրատար

Ջրատարների շրջայցի ժամանակ պարզվել է, որ կոյուղաջրերը լցվում են Մայակովսկի գյուղի «Կաթնաղբյուր 3»-ի ջրամիացման հանգույց: Հայտնաբերվել է 1 վթար, ինչպես նաև վթարված էր Կաթնաղբյուր 4-ի վրա գտնվող օդահեռ փականը: Այդ բոլոր թերությունների մասին տեղեկացվել է «Հյուսիս» տեղամասին, ում կողմից և դրանք վերացվել են:

Տարբեր տեղամասերում խմբի աշխատակիցների կողմից կատարվել են ջրաքանակների կարգավորման աշխատանքներ:




### 3.5 ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● **Սևան քաղաքի** Նաիրյան փողոցում վթարավորոնողական աշխատանքների արդյունքում նախկին «Կատարողական» սարքերի գործարանի տարածքում հայտնաբերվել է 100մմ տրամագծով պողպատե խողովակ, որով հոսում էր 1լ/վ քանակությամբ ջուր՝ անհայտ ուղղությամբ: Այն անմիջապես խցափակվել է, ինչի արդյունքում տնտեսվել է նույնքան 1լ/վ քանակությամբ ջուր:



● Նաիրյան փողոցում տեղադրված ծախսաչափի տվյալների համեմատությունը ցույց է տալիս տնտեսված ջրի քանակը:



● Լճաշեն գյուղում վթարաորոնողական աշխատանքների արդյունքում 500մմ ջրատարի և 225մմ պ/է միացման կետում հայտնաբերվել է 10լ/վ քանակությամբ վթար:

● Վթարաորոնողական աշխատանքների արդյունքում 6,5 րվ քանակությամբ վթար է հայտնաբերվել Կոտայքի մարզի Ջրառատ գյուղը սնուցող 300 մմ պողպատե ջրատարի վրա:



● Կարմիր գյուղում Գավառ տեղամասի հետ համատեղ կատարած ուսումնասիրությունների արդյունքում Պ.Սևակ փողոցում հայտնաբերվել է 8լ/վ քանակությամբ վթար:





## Քաղաք Գյումրի

● Գյումրի քաղաքի Արովյան փողոցում սուրվենցիոն ծրագրով իրականացվող փողոցաշինական աշխատանքների շրջանակներում փողոցում առկա հին, բայց գործող  $D=300$ մմ թուջե խողովակի շահագործումից հանելու աշխատանքներից հետո, հարակից Պոռոջյան փողոցը ջրագրկվել էր, ուստի տվյալ փողոցի համար կառուցվել են նոր ՊԷ ջրագծեր՝  $D=63-25$ մմ տրամաչափի: Արդյունքում կառուցվել են  $D=63$ մմ ՊԷ  $L=300$  գմ և  $D=25$ մմ ՊԷ տնային միացումներ:



● Գյումրի քաղաքի Բուլվարային 5 հասցեում գործող նախկին հաշվիչ կայանի շենքի սնուցող  $D=100$ մմ ջրագծի վթարված լինելու պատճառով որոշվել է այն հանել շահագործումից միացման տեղում խցափակման եղանակով: Արդյունքում սնտեսվել է  $\approx 0,5$ լ/վ ջրաքանակ:



● Գյումրի քաղաքի Մ.Սկրտչյան-Պարոնյան փողոցների խաչմերուկում խցափակման եղանակով շահագործումից հանվել է  $D=100$ մմ  $L=87$  գմ ջրագիծ թուջե ջրագիծ: Արդյունքում սնտեսվել է  $\approx 5$ լ/վ ջրաքանակ:



## Քաղաք Երևան

● Ներքին Շենգավիթ 9-րդ և Ե.Թադևոսյան փողոցների խաչմերուկում շահագործումից հանվել է  $D=200$ մմ  $20$ մ վթարված ջրագիծ, փոխարենը կառուցվել է  $D=63$ մմ ՊԷ  $L=20$ մ նոր ջրագիծ, ինչի արդյունքում տնտեսվել է  $Q=4$ լ/վ ջրաքանակ:




● Գարեգին Նժդեհ 15 հասցեում գտնվող վթարված  $D=100$ մմ,  $L=30$ մ ջրագիծը փոխարինվել է  $D=63$ մմ ՊԷ  $L=30$ մ ջրագծով ներսրսկման միջոցով: Արդյունքում տնտեսվել է  $Q=4$ լ/վ ջրաքանակ:

● Քանաքեռ Վերին ՕԿՁ-ից Քանաքեռին սնուցող  $D=300$ մմ ջրատարի  $D=300$ մմ ՃԿՓ-ն գործարկելով տնտեսվել է  $Q=20$ լ/վ ջուր: Շահումյան տեղամասում Թաիրովի ՃԿՓ-ն կարգաբերվել է ճնշման իջեցմամբ: Արդյունքում տնտեսվել է  $Q=3$ լ/վ ջուր:

## Քաղաք Չարենցավան

● Չարենցավան քաղաքում շահագործումից ապամոնտաժման եղանակով հանվել է գումարային  $L=3000$ մ,  $D=100$ մմ հին ջրագիծ, որը կազմում է ամբողջ ցանցի գրեթե 20%-ը: Փոխարենը կառուցվել է  $D=63$ մմ ՊԷ նոր ջրագիծ: Արդյունքում տնտեսվել է  $Q=6$ լ/վ ջրաքանակ:



ԼՐԱՏՎԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Հոկտեմբերը բարոյա-հոգեբանական ոռոմով շատ ծանր ժամանակաշրջան հանդիսացավ ՎեոլիաԹիմի համար: Արցախում վերսկսված պատերազմը պահանջեց լարվածություն նաև ընկերությանից:



Նախ, ի լրումն սեպտեմբերին փոխանցված 20 մլն դրամի, տնօրինությունը համակարգի աշխատակիցների կողմից ևս 23 միլիոն դրամ փոխանցեց <Հայաստան> համահայկական հիմնադրամին: Մի շարք աշխատակիցներ կամավոր կամ մոբիլիզացվելով մեկնեցին բանակ և մասնակցության բերեցին մարտական գործողություններին: Նրանցից 3 զոհվեցին, շատերը վիրավորվեցին: Այս ամենն իր արտահայտությունը գտավ Հանրային կապերի բաժնի /ՀԿԲ/ և ներգրավված Մետրիկա Խորհրդատվական ընկերության աշխատանքում:

Այսօր յուրաքանչյուրս իր պարտքն է համարում իր առավելագույն ներդրումն ունենալ Հայաստանի պաշտպանության և հայրենակի ճանապարհին՝ օգնելով օր առօր վերադարձալ բնականոց և իսաղաղ կյանքի:

Իր ներքին, «Վեոլիա Ջուր»-ը, առավել քան երբեք, գիտակցում և անչափ կարևորում է իր առջև դրված մեծ պատասխանատվությունը, այն է՝ կենսական ճանակարկություն ունեցող ջրամատակարարման համակարգի կայուն և անխափան աշխատանքն ապահովելը:

Ներկայումս ղեկերությունն անում է հնարավորը համակարգի կայուն աշխատանքն ապահովելու... **Տեսնել ավելի**

Հաշվետու ամսին հրապարակվել է Վեոլիա Ջուր ՓԲԸ տնօրինության կոչը աշխատակազմին՝ ստեղծված իրավիճակում էլ ավելի արդյունավետ աշխատելու, առաջացող խնդիրները ավելի արագ լուծելու ու սպասարկման որակը բարձրացնելու համար: Նաև հանրությանը տեղեկացվել է ՎեոլիաԹիմի կողմից ձեռնարկվող քայլերի մասին: Նպատակը այդ ծանր օրերին մոբիլիզացվելն էր ու դժվարություններին դիմագրավելը: Հանրային տրամադրություններով պայմանավորված, նպատակահարմար համարվեց ժամանակավորապես, մինչև իրավիճակի էական փոփոխությունը, նվազագույնի հասցնել համակարգում տարվող աշխատանքների, իրականացվող միջոցառումների, իրադարձությունների մասին հրապարակումները: Ահա թե ինչու հոկտեմբերին Վեոլիա Ջուր ՓԲԸ գործունեությանը վերաբերող հրապարակումների քանակը ֆեյսբուքի Veolia Armenia էջում, ինչպես և veolia.am պաշտոնական կայքում կտրուկ նվազել է: Սակայն ջրանջատումների և մատակարարման մրցույթների մասին հայտարարությունները իրականացվել են ողջ ծավալով, որպես պարտադիր հրապարակման ենթական թեմաների:

#ՀանունՀայրենիքի Արցախի պատվաճական մարտերի ջոկատում զոհվել է մեր գործընկեր, ղեկերության Առևտրային տնօրինության «Արաբիք» տեղամասի մասնագետ-տեսուչ, 31-ամյա Արզիսի Կարապետյանը, ով մեկնել էր ուղևորական՝ որպես կամավոր:

«Վեոլիա Ջուր»-ն իր խորին ցավակցությունն է հայտնում Արզիսի ղեկավարին և նրա ծառայակոմերին: Մեր ղեկերոջ և գործընկերոջ՝ որպես իսկական հայրենասերի, պրոֆեսիոնալ և լավ մարզու, սիրող հոր և անուսուլ վառ հիշատակը հավերժ կննա մեր սրտերում:

ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



### 5.1. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

- Ելնելով Վեոլիա Գրուպի պահանջներից՝ ՈԱԱ Բաժինը մշակեց և Ընկերության Ղեկավարության հաստատմանը ներկայացրեց «Ահագանգաման ընթացակարգի փոփոխված տարբերակը»:
- Ելնելով Ընկերության վթարային խմբերին և ինժեներատեխնիկական անձնակազմերին անվտանգության միջոցներով ապահովման անհրաժեշտությունից, ՈԱԱ Բաժինը մշակեց և Գնումների վարչությանը տրամադրեց ճանապարհային ժամանակավոր նշանների, հենարանների, ճանապարհային լուսավորության սարքերի, ինչպես նաև քլոր տեղափոխող մեքենաների համար նախատեսվող ԱՊՄ-ների տեխնիկական մասնագրերը՝ այդ ԱՊՄ-ների ձեռքբերման գործընթացը կազմակերպելու համար:

### 5.2. COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ՈԱԱ Բաժինը ՄՈԿ վարչության հետ համատեղ օպերատիվ կերպով Ընկերությունում COVID-19-ով վարակված կամ կոնտակտավոր աշխատողների մասին համապատասխան տեղեկատվությունը տրամադրեց ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի պատասխանատուներին:
- ՈԱԱ Բաժինը, Ընկերության ստորաբաժանույների պատասխանատուներին իրազեկեց ՀՀ առողջապահության նախարարի 24/10/2020 թվականի թիվ 30-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով կիրառվող ՄԿ N 3.1.2-001-20 սանիտարական կանոնների» մասին:
- Ինչպես նաև ամենօրյա ռեժիմով Ընկերության ստորաբաժանույներից ՈԱԱ Բաժինն ներկայացվեցին կառուցվածքային ստորաբաժանույների անձնակազմերի ջերմաչափման և գրասենյակների ախտանման աշխատանքների վերաբերյալ տվյալները:
- Ընկերությունը, ելնելով աշխատողների շրջանում COVID-19 համավարակի տարածման կանխարգելման անհրաժեշտությունից, շարունակեց կազմակերպել Էկոսենս բժշկական լաբորատորիաների կողմից թվով 147 աշխատողի՝ ՊՇՌ թեստավորման աշխատանքները:
- Աշխատողների մասնակցությունը ՊՇՌ թեստավորմանը եղել է բացառապես վերջիններիս համաձայնությամբ:
- Հաշվետու ամսվա ընթացքում Ընկերությունում COVID-19 համավարակի տարածման կանխարգելման շրջանակներում ՈԱԱ Բաժինը կազմակերպեց նաև Ընկերության գրասենյակների մոտ 5385 քմ մակերեսի լրացուցիչ ախտահանման աշխատանքները:

### 5.3. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՄԵՄԻՆԱԸՆԵՐ


● Բաժինը, Ջրի որակի վարչության հետ համատեղ, Ընկերության Արտաշատ տեղամասի 3 աշխատակցի համար կազմակերպեց և իրականացրեց «Խմելու ջրի որակի հսկողությանը ներկայացվող պահանջներ» թեմայով դասընթաց:

● Հիմք ընդունելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջները՝ ՈԱԱ Բաժինը կազմակերպեց և իրականացրեց Ընկերության ՔՆԻՏՄԿ ծառայության թվով 1 աշխատակցի համար «Քլոր տեղափոխող մեքենայի վարորդի մասնագիտական որակավորման հեռավար դասընթաց/գիտելիքների ստուգում»:

● ՈԱԱ Բաժնի պետը մասնակցեց Վեոլիա Կամպուսի կողմից կազմակերպված «Համապատասխանության դասընթացի E-Learning կառավարման պլատֆորմի ադմինիստրատորի համար նախատեսված հեռավար դասընթացին»:



2019-2020թթ. կազմակերպված դասընթացների/թեստավորումների (ԴԱՍԸՆԹԱՑ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



#### 5.4. ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● ՈԱԱ բաժինը Ընկերության ՄՌԿ վարչության հետ համատեղ, ղեկավարվելով ՀՀ կառավարության 27/09/2020 թվականի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» N 1586-Ն որոշման և «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի պահանջներով, Ընկերության Ղեկավար կազմի հանձնարարականների հիման վրա համակարգեց Օրենքից բխող Ընկերության պարտավորությունների շրջանակներում Զորահավաքային և զորակոչային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներից և ՀՀ ՏԿԵՆ Զրային կուրսերից իջեցված կարգադրությունների կատարման, դրանց փաստաթղթավորման գործընթացները:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ  
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## 6.1. Համակարգչային ցանց

Հոկտեմբեր ամսվա ընթացքում IT բաժնի կողմից իրականաց հիմնական աշխատանքների ցանկը ներկայացված է ստորև

- Գնվել է “Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության SS ենթակառուցվածքների և սերվերների սպասարկման” բաժնի հիմնական գործառույթներ իրականացնելու համար անհրաժեշտ գործիքների և նյութերի մեծ մասը
- Գնվել է “Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության SS ենթակառուցվածքների և սերվերների սպասարկման” բաժնի հիմնական ծախսվող նյութերի և սարքավորումների մեծ մասը
- Մասնակցվել է “Վեոլիա” Խմբի IT անվտանգության բաժնի կողմից կազմակերպված IT անվտանգության ժողովին, որին մասնակցել են բոլոր “Վեոլիա” խմբում առկա երկրների IT անվտանգության մասնագետները և քննարկվել է ապագա զարգացման ծրագրերը և քննարկվել են արդեն իսկ իրականացված աշխատանքները:
- Մասնակցվել է “Վեոլիա” Խմբի IT անվտանգության բաժնի կողմից կազմակերպված IT անվտանգության խորհրդի առաջի ժողովին: Քննարկվել է այդ խորհրդի ձևավորման նպատակները և ապագա քայլերը:
- Իրականացվել է IU-Connect հեռախոսային կենտրոն համակարգի ծրագրային տարբերակի թարմացում:
- “Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության SS ենթակառուցվածքների և սերվերների սպասարկման” բաժնի աշխատակիցների համար կազմակերպվել է դասընթաց քարթրիջների լիցքավորման կառավարման “Ինտերակտիվ” համակարգի հատուկ մոդուլից օգտվելու սովորացնելու նպատակով
- 1-85 հեռախոսային կենտրոնի ղեկավար անձնակազմի հարցման հիման վրա իրականացվել է փորձարկում 1-85 հեռախոսային կենտրոնի աշխատակիցների IP հեռախոսների փոխարինման ծրագրային հեռախոսներով: Փորձարկվել են տարբեր ծրագրային լուծուժեքներ՝ Zoiper, 3CX և այլ: Փորձերի արդյունքում հայտնաբերվել են որոշակի անհարմարություններ նմանակի լուծուժեքով բաժնի առօրյա աշխատանքի համար, ինչպես նաև հավելյալ սարքավորումների գնման անհրաժեշտություն: Փորձի արդյունքում հայտնաբերվել են հնարավոր լուծուժեքներ հեռախոսային կենտրոնի հեռահար աշխատանքի կազմակերպման համար, սակայն բնականոն առօրյա աշխատանքի համար IP հեռախոսները հետ են տեղադրվել:
- Մեկնարկվել է “Վեոլիա” Խմբի IT անվտանգության բաժնից հրահանգավորված և պարտադիր բոլոր երկրների համար EDR անվտանգության համակարգի ներդրման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրում
- Մեկնարկվել է NeoCAP աուդիտորական արշավը և այդ աուդիտորական արշավում առկա հարցերի պատասխանների և անհրաժեշտ տվյալների հավաքագրումը:
- Ստեղծվել է ազատ համակարգիչների և մոնիտորների ցանկ հետագա բաշխման նպատակով:
- Ներդրվել է անպայման ջերմաչափման և ջերմաչափման տվյալների հավաքագրման գործընթաց IT բաժնի բոլոր աշխատակիցների համար անկախ կազմակերպության ներսում գործող հակահամաճարակային գործընթացներից: IT բաժնի բոլոր աշխատակիցները օրական մի քանի անգամ իրականացնում են ջերմաչափում և գրանցում են այն:
- Google Currents համակարգում ստեղծվել է IT բաժնի համար առանձնացված խումբ: Այդ խումբի նպատակն է ավելի հեշտ հասանելի դարձնել փոլոր այն տեղեկատվությունը որը անհրաժեշտ է բաժնի աշխատակիցների աշխատանքի համար, ինչպես նաև ավելի արագ տեղեկացնել բաժնի աշխատակիցներին IT ոլորտում նոր վտանգների և առավել կարևոր նորությունների մասին:
- Մեկնարկվել է հեռահար տվյալներ փոխանցող ջրաչափերի սարքավորման և ծրագրային ապահովման աշխատանքի տեստավորումը բջջային հեռախոսների համար
- Ստեղծվել և հաստատվել է IT բաժնի համար նախատեսված պահեստի նախագիծը: Մեկնարկվել է տեղեկային գործընթաց պահեստի կառուցման համար:
- vjur.am էլեկտրոնային նամակագրության համակարգում փոխարինվել և ոչնչացվել են ոչ անվանական էլ. հասցեների հիմնական մեծ մասը:
- Ներդրվել են նոր անվտանգության գործիքակազմ էլեկտրոնային նամակագրության համակարգերի համար
- Իրականացվել է փչացած և վերանորոգման ոչ ենթակա անխափան սնուցման սարքերի դուրս գրում:
- Տրամադրվել են նոր օգտատերեր հեռահար աշխատող աշխատակիցների համար: Իրականացվել են համապատասխան կարգավորումներ:
- Սպասարկվել է մոտ 550 զանգ IT բաժնի աջակցության համարով:
- Գրանցվել և փակվել է մոտ 400 աջակցության տոմս:

## 6.2. Ինտերակտիվ համակարգ

Հոկտեմբեր ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության՝ ձևավորման հետ կապված՝ տեղի են ունեցել մի շարք գործընթացներ:
- Ինտերակտիվ համակարգում ստեղծվել է առանձին ծրագրային մոդուլ, որի միջոցով հնարավորություն է ստեղծվել գույքագրել, կառավարել և վերահսկել տպիչ սարքերի և քարթրիջների լիցքավորման գործառնությունները:
- Հաշվետվություններ են տրամադրվել ՀԾԿՀ, ՋՏՊԿ և ընկերության այլ ստորաբաժանումներին:
- Մի շարք փոփոխություններ են կատարվել ինտերակտիվ համակարգում՝ կապված ընկերության ստորաբաժանումների ավտոմատիզացման ուղղությամբ:

● Ակտեր Ինտերակտիվ համակարգի միջոցով՝ ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է հոկտեմբեր ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառնություններ) Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառնությունը համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է հոկտեմբեր ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

<b>Խախտման արձանագրություն</b>			
Տեղամաս	Ընդամենը		
	քանակ	հազ. խ/մ	մլն. դրամ
Էրեբունի	15	7.2	1.2
Շենգավիթ	3	24.6	4.4
Կենտրոն	3	16.7	2.6
Արաբկիր	8	12.1	2.0
Մաշտոց	11	16.0	2.7
Շահումյան	6	4.0	0.7
ԽՈՇՈՐ	1	5.7	1.0
ԱՎԲ	101	66.2	11.4
Շիրակ	1	0.3	0.0
Արթիկ	4	1.7	0.3
Արարատ	1	0.1	0.0
Աբովյան	27	9.0	1.4
Հրազդան	6	2.3	0.4
Ալավերդի	2	0.6	0.1
Գավառ	9	4.2	0.7
Գորիս	10	2.1	0.3
Թային	4	1.2	0.2
Կապան	3	1.3	0.2
Մասիս	1	0.5	0.1
Մեղրի	2	1.0	0.2
Նոյեմբերյան	1	0.5	0.1
Արմավիր	1	0.5	0.1
Սևան	1	0.4	0.1
Աշտարակ	10	2.7	0.4
Չարենցավան	1	0.2	0.0
Միսիան	1	0.5	0.1
<b>Ընդամենը</b>	<b>233</b>	<b>181.6</b>	<b>30.8</b>

<b>Լաբորատորիա</b>				
Տեղամաս	Միջամտություն		Մնացորդ	
	քանակ	հազ.ԼՊՎ	քանակ	հազ.ԼՊՎ
Հյուսիս	14	7.11	54	6.93
Էրեբունի	20	8.66	108	10.49
Շենգավիթ	8	3.05	36	0.39
Կենտրոն	14	13.26	79	1.38
Արաբկիր	13	13.32	50	1.32
Մաշոց	12	25.25	54	2.97
Շահումյան	22	8.27	90	1.24
Քանաքեռ-Զեյթուն	3	0.70	17	0.67
Լոռի	8	2.62	48	0.35
Արթիկ	11	4.51	30	0.65
Աբովյան	34	7.98	84	0.60
Հրազդան	22	7.74	44	0.35
Ալավերդի	2	0.53	14	0.06
Աշոցք	-	-	5	0.03
Ապարան	1	1.03	-	-
Արտաշատ	6	1.75	156	1.41
Գավառ	3	0.75	10	0.10
Գորիս	3	1.55	10	0.03
Դիլիջան	-	-	9	0.03
Եղեգնաձոր	5	2.16	5	0.14
Էջմիածին	2	1.28	7	0.13
Թային	2	0.45	2	0.00
Իջևան	4	0.24	8	0.01
Կապան	1	0.52	1	0.00
Մասիս	8	3.35	33	0.30
Մեղրի	-	-	7	0.06
Նոյեմբերյան	1	0.52	46	0.39
Արմավիր	8	5.31	80	0.85
Ջերմուկ	1	0.26	2	0.00
Սևան	3	8.83	14	0.12
Վաք	2	3.09	6	0.04
Աշտարակ	9	3.95	25	0.51
Չարենցավան	8	2.5	25	0.15
Մյասիս	-	-	9	0.16
Մայիսակ	-	-	3	0.01
Ստեփանավան	2	7.89	38	0.2
Տաշիր	-	-	12	0.15
<b>Ընդամենը</b>	<b>252</b>	<b>148.41</b>	<b>1221</b>	<b>32.23</b>



«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ  
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1  
ՀՀ, 0025, ք.երևան, Արովյան 66ա  
E-mail: info@vjur.am